

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ-ռուսական բժշկական կապերի բազմահարուստ պատմությունն իր շատ կողմերով դեռևս մնում է շուտամնասիրված: Այդ պատմության սկզբնաղբյուրներից մեկն է ռուսական բժշկական պարբերական մամուլը, որի էջերը հարուստ են հայ-ռուսական բժշկական համագործակցության փաստերով:

Ներկա հաղորդման մեջ մենք կանգ կառնենք ռուսական բժշկության նշանավոր հանդեսներից մեկի՝ «Ռուսկի վրաչի» վրա (որը սկսեց հրատարակվել Պետերբուրգում 1902 թ.), նպատակ դնելով լուսաբանել «Ռուսկի վրաչը» և հայ բժիշկներն ու բժշկությունը Հայաստանում հարցը, որը հայ-ռուսական բժշկական կապերի պատմության շուտամնասիրված էջերից մեկն է:

«Ռուսկի վրաչում» հրատարակվել են բազմաթիվ գիտական աշխատություններ, այդ թվում նաև հայ բժիշկների ուսումնասիրությունները: Այստեղ, գիտական հետազոտությունների հետ մեկտեղ, հայ բժիշկները հրատարակել են նաև այլ հոդվածներ, մասնավորապես կազուիստիկ բնույթի նյութեր:

Այդ աշխատությունների հեղինակները ռուսական բժշկական մտքի կենտրոններում իրենց բեղուն գործունեությունը ծավալած հայ բժիշկներն են: Դրանցից է եղել ի. Դ. Արխիպյանցը, որը «Ռուսկի վրաչում» հանդես է եկել Պետրոգրադի կանանց բժշկական ինստիտուտում կատարած իր մի շարք հետազոտություններով: Այդ հետազոտությունները վերաբերում են տիֆի վակցինայի պատվաստումներին, խմելու ջուրը վարակազերծելու նպատակով բանակում քլորալին հաբերի կիրառմանը, ալկոհոլի վարակազերծող դերին և այլն:

Այս հանգեսում հրատարակվել է նաև Լ. Գ. Ճգնավերտվի հոդ-
վածք «Էնդու մեջ խախտւոյն վերբոններ լինելու և մնալու մասին»
վերնագրով: Տվյալ աշխատանքը կատարվել է Կիևի բակտերիոլո-
գիական ինստիտուտում, պրոֆ. Վ. Կ. Վիսոկովսկիի գեկավարու-
թյամբ:

Ինչպես և Գ. Արխիպլանցը, այնպես էլ Լ. Գ. Ճգնավերտվը հե-
տադաշում, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայից
հետո, զգալի ծառայութուն են մատուցել Սովետական Հայաստա-
նում բարձրորակ բժշկական կադրեր պատրաստելու գործում:

«Ռուսկի վրաշում» հրատարակվել են նաև Պետերբուրգում ծա-
ռայած հայ բժիշկներ Ս. Ի. Քալանթարյանցի «Ազգրային զարկե-
րակի կապումը հունտերյան խողովակում», Գ. Ն. Մաղաբյանի
«Դոնեբրակի թրմորոզ» վերնագիրը կող աշխատութունները Այս-
տեղ տպագրվել են նաև Մոսկվայի համալսարանի բժշկական ֆա-
կուլտետում աշխատած մի շարք հայ բժիշկների՝ Ի. Ի. Թամամշեի
«Կոնաձև եղջերենու էթիոլոգիայի և բուժման հարցի շուրջը», Ա. Բ.
Բալայանի «Պոլիցիտեմիայի պաթոգենեզի մասին» աշխատու-
թյունները և բազմաթիվ այլ հայ բժիշկների գործեր:

«Ռուսկի վրաշի» «Նամակներ Ռուսաստանից և արտասահ-
մանից» բաժնում 1904 թվականից սկսած աշխատակցել է Ա. Բա-
րաև-Բաբայանցը: Այստեղ տպագրվել է նրա նամակաշարը Աբաս-
թումանից: Նամակների նպատակն է եղել բացահայտել Աբասթու-
մանի՝ որպես լավագույն կուրորտի արժանիքները, ուշադրութուն
հրավիրել նրա բարեկարգման գործին:

«Ռուսկի վրաշի» «Նամակներ Ռուսաստանից և արտասահմա-
նից» բաժնում լուսարանվում էին նաև եվրոպական մի շարք երկրնե-
րի բժշկական կյանքի չիոքը ի շատե կարևոր իրադարձութունները:

«Ռուսկի վրաշում» հրատարակվել է Ա. Բաբայանցի Փարիզից
գրած նամակը «Նոր օրենք հոգեկան հիվանդների վերաբերյալ»
բժշկական կոնսուլտացիաներ դժբախտ դեպքերում բանվորներին
ցույց տրվող օգնության համար» վերնագրով:

Նույն հանգեսում հրատարակվել են նրա երկու այլ նամակնե-
րը ևս, որոնք վերաբերում են Փարիզի համալսարանի բժշկական
ֆակուլտետի նորամուծութուններին: Իր առաջին նամակում Ա. Բա-
բայանցը պատմում է այդ ֆակուլտետում ֆիզիոթերապիայի ավանդ-
ման մասին: Երկրորդ նամակը վերաբերում է Փարիզի համալսա-
րանի բժշկական ֆակուլտետում օտարազգի պրոֆեսորների կար-
գացած դասախոսութուններին:

Ի՞նչն է հատկանշականը Ա. Բաբայանցի՝ Փարիզից «Ռուսկի

վրաշին» ուղղած նամակներում: Ամենից առաջ հեղինակի ձգտումը իր ոռու կոլեգաներին տեղյակ պահել Փարիզի բժշկական կյանքի նորություններին: Նորությունների գնահատության գործում Ա. Բաբայանցը ծայրահեղությունների մեջ չի ընկնում—ո՛չ անտեղի արհամարհանքը, ո՛չ անհիմն հիացմունքը տեղ չեն գտել Ա. Բաբայանցի այդ նամակաշարում: Իր նամակներում հեղինակը ձգտել է օբյեկտիվ լինել և այդ նրան հաջողվել է, մի հանգամանք, որ զգալի չափով բարձրացրել է նամակների արժեքը:

Ինչպես «Վրաշը», այնպես էլ «Ռուսկի վրաշը» իր խրոնիկայի բաժնում տեղեկություններ էր տալիս Ռուսաստանում բժշկական գիտությունների դոկտորի աստիճանի համար պաշտպանված դիսերտացիաների մասին: Այստեղ մենք հանդիպում ենք նաև հայ բժիշկների անունների՝ Գ. Ս. Գևորգ-Բեկյան, է. Մ. Կաստանյան, Ի. Ա. Ախվերդով, Ա. Ա. Տեր-Հարությունյանց և այլն:

«Ռուսկի վրաշում» թղթակցություններ են տպագրվել Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիայում մի շարք տարիների ընթացքում պաշտպանված դիսերտացիաների վերաբերյալ:

Այդ թղթակցությունների արժեքն այն է, որ նրանցում, երբեմն, թեպետ շատ համառոտակի, շարադրված են նաև պաշտոնական օպոնենտների եզրակացությունները դիսերտացիաների վերաբերյալ, Մինչդեռ արխիվային փաստաթղթերում այդ բնույթի տեղեկություններ գրեթե չկան, դիսերտացիաների պաշտպանության սղագրություն չի կատարվել, օպոնենտների գրավոր կարծիքները գործին չեն կցվել: Ուստի դիսերտացիաների պաշտպանությանը նվիրված այդ թղթակցությունները որոշ չափով լրացնում են վերը նշված պակասը: Սակայն, տարաբախտաբար, այդ թղթակցությունները հրատարակվել են ո՛չ սխտեմատիկ:

Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիայում 1907 թ. մարտի 24-ին դեկտորական դիսերտացիա է պաշտպանել Վ. Գ. Տեր-Գրիգորյանցը՝ «Մանկական հասակի որոշ հիվանդությունների ժամանակ ինդիկանուրիայի մասին» թեմայով: «Ռուսկի վրաշում», այդ պաշտպանության վերաբերյալ ինֆորմացիայում նշվում է, որ դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներն են եղել պրոֆ. Ն. Պ. Գումբոլդտը, Ա. Պ. Ֆավրյեկին և Բ. Ի. Սլոյցովը, որոնք մեծ գովեստով են արտահայտվել դիսերտանտի աշխատանքի մասին:

1909 թվականին «Ռուսկի վրաշում» թղթակցություն է տպագրվել Մ. Ի. Աստվածատուրովի դիսերտացիայի պաշտպանության մասին: Մ. Ի. Աստվածատուրովը Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիայում 1908 թ. դեկտեմբերի 11-ին դիսերտացիա է պաշտ-

պանել «Խոսքային ֆունկցիայի էքսպերիմենտալ հոգերանական հետազոտությունը» թեմայով՝ Վերոհիշյալ թղթակցության մեջ, դիտարկողի համառոտ անոտացիայից հետո, ասված է, որ դիտարկողի պաշտոնական օպոնենտներ Վ. Մ. Բեխտերևը, Ա. Պ. Ֆավիցկին և Ա. Ֆ. Լազուրսկին Աստվածատուրովի դիտարկողի համարել են «կապիտալ ներդրում դիտական տվյալ բնագավառի գրականության մեջ»:

«Ռուսկի վրաչը» հայ բժիշկների դիտական աշխատությունների մասին ինֆորմացիաներ հրապարակելուց բացի, լուսաբանել է նաև առանձին հայ բժիշկների գործունեությունը Այդ տեսակետից ուշադրով է Մ. Ի. Առուստամովի Աստրախանում ծավալած գործունեությանը նվիրված հոդվածը, որում առանձնապես շեշտվում է Մ. Ի. Առուստամովի սկզբունքային պայքարը ձկնարդյունաբերության մեջ սանիտարական նորմալ պայմաններ ստեղծելու համար:

«Ռուսկի վրաչի» նույն հոդվածում խոսվում է նաև Առուստամովի դիտական գործունեության մասին՝ մասնավորապես ձկան թույնի բնույթի ուսումնասիրության ասպարեզում:

Հոդվածն ավարտվում է Մ. Ի. Առուստամովին բնութագրող մի հատվածով, որտեղ ասված է, որ նա ազնիվ էր թե՛ որպես բժիշկ, թե՛ որպես հասարակական գործիչ և թե՛ որպես ընկեր:

Ջերմ ու սրտաբուխ է Մ. Ի. Առուստամովի հիշատակին նվիրված վերոհիշյալ հոդվածը, որն ավելի շուտ բնութագրման փորձ է, քան մահախոսական, և պատահական չէ, որ հետագայում Մ. Ի. Առուստամովի մի շարք կենսագիրներ մեջբերումներ են կատարում այդ հոդվածից¹:

«Ռուսկի վրաչում» նյութեր կան Մ. Ի. Առուստամովի «Ձկան թույնի մասին» աշխատությունը մրցանակի արժանացնելու և այդ առթիվ ծագած բանավեճի վերաբերյալ:

«Ռուսկի վրաչը» գրում է, որ հանգուցյալ Մ. Ի. Առուստամովի «Ձկան թույնի մասին» աշխատությունը դիտությունների ակադեմիայի հանձնաժողովի կողմից արժանացել է փոքր մրցանակի: Հոդվածում միաժամանակ նշված է, որ Մ. Ի. Առուստամովը այդ հարցը հետազոտել է 11 տարիների ընթացքում և այդ աշխատանքն ընդհատվել է նրա հանկարծակի մահվան պատճառով միայն:

¹ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կողմից 1958 թ. հրատարակվել է Մ. Ի. Առուստամովի «Ձկան թույնի բնույթի մասին» աշխատությունը, որի ընդարձակ առաջաբանը գրել են ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանը և բժշկական գիտությունների թեկնածու Ա. Ս. Կծոյանը:

Մրցանակաբաշխութեան հանձնաժողովի որոշումը իր ժամանակին հրապարակվել է մամուլում:

Մրցանակաբաշխութեան հանձնաժողովին նույնատիպ աշխատութիւն էր ներկայացրել նաև բժիշկ Ս. Վ. Կոնստանտնովը: Հանձնաժողովը իր եզրակացութեան մեջ Կոնստանտնովի աշխատութիւնը արժեքավոր էր համարել այն տեսակետից միայն, որ այն հաստատում, մասամբ էլ լրացնում է Առուստամովի հետազոտութիւնը, հանդիսանալով Առուստամովի հայացքների հետագա մշակումը:

«Ռուսկի վրաշում» հանձնաժողովի այդ որոշման դեմ հանդես եկավ Կոնստանտնովը: Իր բավականաչափ ընդարձակ հոդվածում նա ամեն կերպ աշխատում էր ապացուցել, որ ինքը ոչ թե կրկնում է Առուստամովին, այլ բոլորովին այլ մոտեցում ունի հարցին: Նրա կարծիքով՝ ձկան թույնով թունավորումը ոչ թե ինֆեկցիոն հիվանդութիւն է, որ առաջանում է օրգանիզմում կենդանի բակտերիաների ներգործութեան հետևանքով, ինչպես պնդում է Առուստամովը, այլ քիմիական բնույթի բակտերիային թունավորում է, որ ձկան թույնը կենդանի բակտերիաների ներգործութեան արդյունքը չէ, այլ քիմիական մարմին է, որը օրգանիզմի մեջ մտնում է դրսից և ոչ թե զարգանում է այնտեղ:

Ի տարբերութիւն Մ. Առուստամովի, որը ձկան թույնով թունավորումն ընդունում էր որպես սպեցիֆիկ բակտերիաների ներգործութիւն, Կոնստանտնովը ձկան թույնը դիտում է որպես քիմիական մարմին, որպես ձկան ներման, քայքայման արգասիք:

Մի շարք այլ առարկութիւններից հետո Կոնստանտնովը հանգում է այն եզրակացութեան, որ հանձնաժողովը տենդենցիոզ է եղել և ձգտել է հարցերը լուծել ի վնաս իրեն և հօգուտ Առուստամովի:

Երբ Կոնստանտնովը հրապարակեց իր հոդվածը, Առուստամովը վաղուց արդեն մահացել էր, բայց Կոնստանտնովի հոդվածն անպատասխան չմնաց:

«Ռուսկի վրաշում» պրոֆ. Ն. Զիստովիչը, որը վերոհիշյալ հանձնաժողովի անդամ էր և Առուստամովի ու Կոնստանտնովի աշխատութիւնների ոեցնեղնեղնոր, հանդես եկավ պատասխան հոդվածով:

Պրոֆ. Զիստովիչը նշում է, որ հանձնաժողովը ձկան թույնի վերաբերյալ քննարկել է Մ. Ի. Առուստամովի ու Ս. Վ. Կոնստանտնովի աշխատութիւնները և համառոտակի կանգ է առնում դրանց վրա:

Նա նշում է, որ բժիշկ Մ. Ի. Առուստամովի աշխատութիւնը 11 տարիների լուրջ հետազոտութեան արդյունք է: Հեղինակն ուսում-

նասիրել է ձկան թույնով թունավորման մի շարք դեպքեր, տվել է թունավորման նկարագրությունը և հանգել այն հղրակացությունը, որ այդ հիվանդությունը բուրդրովին այլ է, քան նեխված ձկնից թունավորվելը:

Պրոֆ. Զիստովիչը Ս. Վ. Կոնստանտսովի աշխատության մասին գրում է հետևյալը.

Երբ մահն ընդհատեց բժ. Առուստամովի աշխատանքները, հարադատները նրա անջատած միկրոբների մշակույթի պահպանությունը հանձնեցին Աստրախանի բժիշկների ընկերությանը, որը և այն հանձնարարեց բժ. Կոնստանտսովին: Վերջինս օգտվեց այդ նյութից՝ ձկան թույնի վերաբերյալ էքսպերիմենտալ հետազոտության համար (կլինիկական նյութ նա չի ունեցել) և իր աշխատությունը ներկայացրեց մրցանակաբաշխության:

Բժիշկ Կոնստանտսովի խնամքով թաքցրած այս փաստի բացահայտումը պրոֆ. Զիստովիչի կողմից ինքնին բնորոշում էր Կոնստանտսովին: Պրոֆ. Զիստովիչը փաստերով ապացուցում է, որ Կոնստանտսովը կրկնում է Առուստամովի հղրակացությունները և ոչինչ չի ասում այն մասին, որ Առուստամովը դրանց հանգել է շատ տարիներ առաջ:

Այնուհետև պրոֆ. Զիստովիչը կանգ է առնում ձկան թույնի բնույթի վերաբերյալ բժիշկ Կոնստանտսովի կատարած հետազոտության հարցերի վրա, բացահայտում է Կոնստանտսովի աշխատության և մասնավորապես, նրա բանավիճական բնույթ կրող հոդվածի սխալներն ու թերությունները: Պրոֆ. Ն. Զիստովիչի այս պատասխան-հոդվածից հետո բանավեճը դադարում է:

«Ռուսկի վրաշում» ղեկավարած այս նյութերը, մասնավորապես Կոնստանտսովի և Զիստովիչի բանավեճը, արժեքավոր են այն տեսակետից, որ լրացնում, հարստացնում են Առուստամովի կենսագրությունը:

«Ռուսկի վրաշում» մենք հանդիպում ենք նյութերի, որոնք վերաբերում են Վ. Ի. Վարդանովի գործունեությանը: Այդ նյութերից երևում է, որ Վ. Ի. Վարդանովը 1908 թվականին մանկավարժական ակադեմիայում ֆիզիոլոգիա է ավանդել պրոֆ. Ի. Պ. Պավլովի և պրոֆ. Ի. Ռ. Թաբլանովի հետ միասին: Նույն թվականին Վ. Ի. Վարդանովն ընտրվում է Պետերբուրգի Պսիխո-նեյրոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր:

1910 թվականին Վ. Ի. Վարդանովն ընտրվում է կանանց բժշկական ինստիտուտի կարգապահական դատարանի անդամ:

1914 թվականին կանանց բժշկական ինստիտուտի պրոֆեսոր-

ների խորհուրդը որոշում է միջնորդել, որպեսզի 5 տարով երկաթաձգվի Վ. Ի. Վարդանովի պրոֆեսորական ծառայությունը, որի 25-ամյա ժամկետը արդեն լրանում էր:

1911 թվականին «Ռուսկի վրաչը» հաղորդում է Վ. Ի. Վարդանովի գիտական և մանկավարժական գործունեության 35-ամյակի տոնակատարության մասին: Կանգ առնելով այն հարցի վրա, թե որքան ջերմորեն է նշվել այդ հոբելյանը կանանց բժշկական և պսիխո-նևրոլոգիական ինստիտուտներում, «Ռուսկի վրաչն» իր կողմից ջերմ շնորհավորանք է հղում Վ. Ի. Վարդանովին:

«Ռուսկի վրաչում» 1916 թվականին լույս տեսավ հաղորդագրություն ռուսական ֆիզիոլոգիական ընկերության և ժուռնալի հիմնադրման միջնորդության մասին, որ կատարել էին պրոֆեսորներ Վ. Ի. Վարդանովը, Ի. Պ. Պավլովը, Ն. Ն. Վվեդենսկին, Ա. Ա. Լիխաչովը, Բ. Ն. Սլոցկովը, Ն. Ի. Կրովկովը և Բ. Ֆ. Վերիգոն:

1908 թվականին Վ. Ի. Վարդանովը մասնակցել է Ի. Ռ. Թարխանովի հիշատակին նվիրված երեկոյի կազմակերպմանը:

«Ռուսկի վրաչի» էջերում տեղեկություններ կան Հայաստանում ծառայած ռուս բժիշկների անձնուրաց գործունեության մասին:

Այսպես, օրինակ, 1907 թվականին այդ հանդեսում շատ ջերմ է նկարագրվել Կարսի ռազմական հոսպիտալի նախկին գլխավոր բժիշկ՝ Ա. Ն. Կրեստնիկովի գործունեությունը:

1864 թվականից, Մոսկվայի համալսարանն ավարտելուց անմիջապես հետո, Ա. Ն. Կրեստնիկովն սկսել է ծառայել Կովկասում, որպես զինվորական բժիշկ: «Կովկասում», — ասված է այդ հոգվածում, — զինվորական բժշկի ծառայությունն այժմ հեշտ չէ, իսկ հին, բարի ժամանակներում շատ ավելի դժվար էր — զինվորական մասերի հետ միասին բժիշկները տարիներով ապրում էին վրաններում, երթային և մարտական կյանքի պայմաններում, ընդին աշխատավարձով...»:

Ա. Ն. Կրեստնիկովը 35 տարի շարունակ Կովկասում զինվորական ծառայության մեջ էր և այդ ծառայությունը նա կատարում էր օրինակելի ու անբասիր կերպով: Կյանքի վերջին շրջանում, թողնելով զինվորական ծառայությունը, Ա. Ն. Կրեստնիկովն ապրում էր Թիֆլիսում և ձրի բժշկական օգնություն էր ցույց տալիս չքավոր բնակչությանը:

«Ռուսկի վրաչի» «երոնիկա և մանր լուրեր» բաժնում առանձին փաստեր կան, որոնք վերաբերում են հայերի մասնակցությանը ռուսական և միջազգային բժշկական կյանքի կարևոր իրադարձություններին:

1909 թվականին «Ռուսկի վրաշում» տպագրվեց՝ մանուկների մահացության դեմ պայքարող մոսկովյան ընկերության բացմանը նվիրված ընդհանուր ժողովի հաշվետվությունը, 1908 թ. հոկտեմբերի 19-ին բացվեց՝ մանուկների մահացության դեմ պայքարող մոսկովյան ընկերությունը, որն իր առջև նպատակ էր դրել ուսումնասիրել մանուկների մահացության պատճառները և պայքարի միջոցառումներ մշակել նրա դեմ: Ընկերության բացումը շերմորեն շնորհավորեցին մի շարք գեյնդատներ — Պիրոգովյան ընկերության վարչությունից՝ Դ. Ն. Ժրանկովը, նույն ընկերության մշտական հանձնաժողովից՝ Ա. Ա. Կիսելը, ֆարերիկաների բժիշկների ընկերությունից՝ Ի. Դ. Աստրախանը և ուրիշներ, այդ թվում Մոսկվայի համալսարանի բժշկության ուսանողների ընկերությունից՝ Ս. Ա. Տեր-Գրիգորյանը:

Իր ելույթում Ս. Ա. Տեր-Գրիգորյանը շերմորեն շնորհավորելով երիտասարդ ընկերությունը, միաժամանակ նշում էր, որ ընկերությանը պետք է լայն օժանդակություն ցույց տան հասարակական կազմակերպությունները և որ միայն այդ պայմանով նա կկարողանա կատարել իր մեծ գործը:

«Ռուսկի վրաշի» մի այլ հաղորդման համաձայն, բժիշկների միջադպյուն XIV համագումարին մասնակցելու համար Ի. Պ. Պավլովի, Վ. Մ. Բեխտերևի, Ն. Ն. Վվեդենսկու և ուրիշների հետ Մադրիդ է մեկնել Վ. Ի. Վարդանովը:

Ինչպես հայտնի է, այդ համագումարում Ի. Պ. Պավլովը հանդես եկավ փայլուն ղեկուցումով, որը ֆիզիոլոգիայի պատմության մեջ մտել է «մադրիդյան ճառ» անունով:

Հանդեսի 1902 թվականի համաթաներից մեկում ինֆորմացիա կա այն մասին, որ Ի. Զ. Վոդիս-Մելիքովը հրավիրվել է Չեկագո բակտերիոլոգիայի վերաբերյալ դասախոսություններ կարդալու:

«Ռուսկի վրաշում» հրատարակվել են Կովկասում առողջապահության գործին վերաբերող տարբեր ընույթի տեղեկություններ, դրանցից մենք կնշենք միայն նրանք, որոնք անմիջորեն կապված են հայերի և Հայաստանի հետ: Թեպետ այդ տեղեկությունները հատուկնեւ են և սխտեմատիկ ընույթ չեն կրում, բայց որոշ դեպքերում կարող են նյութ ծառայել բժշկության պատմության առանձին հարցերի լուսաբանման համար:

Այսպես, 1902 թվականին այդ հանդեսում հաղորդվում է Շամախու երկրաշարժից հետո այնտեղ բռնկված տիֆու բուժման հիվանդությունների մասին: 1903 թվականին նույն հանդեսում հաղորդագրություն է տպագրվել այն մասին, որ Վ. Արծրունուն թույլա-

տըրվել է հրատարակելու «Առողջապահիկ թերթ»-ը: Նույն թվականին հաղորդվում է այն մասին, որ 10000 բնակիչ ունեցող Նոր Բայազետը արդեն 3 ամիս է, ինչ մնացել է առանց բժշկի: 1906 թվականին տեղեկություններ կան Արևելյան Անդրկովկասում տարածված սովի մասին: Երևանի նահանգի Շարուր-Գարալագյազի գավառում տարածված էին սովն ու ընդախտը: Ըստ թերթի տեղեկությունների, այդ գավառում երեք ամսվա ընթացքում սովից մեռածների թիվը հասել էր 450-ի: 1907 թականին հաղորդագրություններ են տպագրվել այն մասին, որ Զանգեզուրի գավառում խիստ տարածված է սովն ու որովայնային տիֆը և հիվանդների մեծ մասը մեռնում է առանց բժշկական օգնության: 1907 թվականին հաղորդվել է այն մասին, որ Գանձակի նահանգը մնացել է համարյա առանց բժշկական օգնության:

«Ռուսկի վրաչում» տեղեկություններ կան Երևանի նահանգում 1904 թ. հոկտեմբերի սկզբին բռնկված խոլերայի վերաբերյալ: Խոլերայով տառապողների մեծ մասը եղել են Զուլֆայի երկաթուղաշինության վրա աշխատող բանվորները: Հոկտեմբերի վերջին խոլերան Ռուսաստանում ամենից ավելի տարածված է եղել Երևանի նահանգում: Նոյեմբերի վերջին խոլերայով հիվանդների թիվն այստեղ հասնում է իր գագաթնակետին՝ մեկ շաբաթում հիվանդանում է 1352 և մեռնում 1107 մարդ: Պարբերաբար տեղեկություններ տպագրելով խոլերայի մասին «Ռուսկի վրաչը» 1910 թ. նոյեմբերի 12-ին պաշտոնապես հաղորդում է՝ մի շարք վայրերում, այդ թվում և Երևանի նահանգում, խոլերայի տեսակետից անբարենպաստ վիճակի վերացումը:

Հայաստանի առողջապահական կյանքի վերաբերյալ նյութերը «Ռուսկի վրաչում» պատահական և հատուկենտ են, իսկ դրանցից ամենից ավելի ընդարձակը մի նամակ է, գրված Ալեքսանդրապոլից:

Ալեքսանդրապոլի քաղաքային բուժարանի բժշկական անձնակազմը կոլեկտիվ կերպով թողել էր գործը: Այդ դեպքի առթիվ Ալեքսանդրապոլի քաղաքային բուժարանի բժիշկ Ա. Տեր-Գրիգորյանցը «Ռուսկի վրաչում» հանդես եկավ ընդարձակ նամակով, որից պարզվում է հետևյալը: 1905 թ. սեպտեմբերին Ալեքսանդրապոլում բացվում է քաղաքային բուժարան: Վերջինս 12 մահճակալանոց էր, անձնակազմը՝ մեկ բժիշկ և երկու բուժակ: Նրանք աշխատում էին շատ բարեխղճորեն, ոչինչ չէին խնայում հիվանդների սպասարկման գործում: Իսկ բուժօգնության համար շատ շատերն էին դիմում, քանի որ դա քաղաքացիական միակ բուժհիմնարկն էր բավա-

կանաչափ մեծ քաղաքում: Շուտով բուժարանի մահճակալների թիվը հասնում է 30-ի, մեկ ամսվա ընթացքում ամբուլատոր հիվանդների թիվը՝ 1000—1100-ի: Սակայն քաղաքային վարչությունը բուժարանի մեկ տարվա գործունեության ընթացքում ոչ միայն ոչնչով չէր օգնում բուժարանին, այլև մի շարք դեպքերում վիրավորում էր բուժարանի անձնակազմին և նրա ղեկավարներին:

Քաղաքային վարչությունը հնարավորություն չէր տալիս բուժարանին լրիվ օգտագործելու իր հաստիքները: Հաստիքով նախատեսված մանկաբարձուհի-բուժակի տեղը թափուր էր, և քաղաքային վարչությունը դեմ էր այդ հաստիքը օգտագործելուն: Շատ անկանոն էր հիվանդների սպասարկումը, դեպքեր էին եղել, երբ բուժարանը ամբողջ օրը մնացել էր առանց խմելու ջրի: Բոլորովին բացակայում էր վաննան և տաք զուգարանը:

Քաղաքային վարչությունը բոլորովին հաշվի չէր նստում բուժարանի ղեկավարի հետ: Բուժարանի ծախսերի նախահաշիվը կադմեիս անգամ նրան չէին կանչում, այլ հրավիրում էին մասնավոր բժիշկների: Քաղաքային դոմայի նիստերում բուժարանի վարիչի հասցեին, նրա բացակայությամբ, զրպարտչական հայտարարություններ էին անում, աղավաղում փաստերը:

Չնայած քաղաքային վարչության կամայականություններին, բժշկական անձնակազմը իր պարտքի քաջ գիտակցությամբ անձնըվիրաբար շարունակում էր կատարել իր պարտականությունները:

Բայց մի դեպք առիթ տվեց ինքիդեհների բուժարանի անձնակազմի և քաղաքային վարչության միջև:

Բուժարանի բուժակուհի Ն. Տիմոֆեևան, որ այդտեղ աշխատում էր տարուց ավելի, մեկ ամսով արձակուրդ խնդրեց, պատճառաբանելով ծանր աշխատանքից առաջացած գերհոգնածությունը: Իսկ աշխատանքը իրոք ծանր էր, քանի որ բուժակուհին, բացի սովորական աշխատանքային ժամերից, օրընդմեջ հերթապահում էր Գտնվեց նրան փոխարինող, բուժարանի վարիչը ձևակերպեց արձակուրդը, իսկ քաղաքային վարչությունը որոշեց բուժակուհուն արձակուրդ տալ առանց աշխատավարձի պահպանման: Վիրավորված այդպիսի վերաբերմունքից, Ն. Տիմոֆեևան հրաժարական տվեց, որը և անմիջապես ընդունվեց քաղաքային վարչության կողմից:

Քաղաքային վարչության կամայականությունները լցրին բուժարանի անձնակազմի համբերության բաժակը: Քաղաքային վարչությունն իր պարտականությունները բուժարանի նկատմամբ սպառնալիք էր համարում, իրեն բուժարանի տեղ ու տնօրեն համարելով,

իսկ թե ինչպիսի ծանր աշխատանք էր կատարում բուժանձնակազմը, այդ նրան բոլորովին չէր հետաքրքրում:

Այդ ամենի հետևանքով բուժարանի ղեկավար բժիշկ Ա. Տեր-Գրիգորյանցը հրաժարական տվեց, 7 օր ժամանակ տալով նոր բժիշկ գտնելու համար: Ա. Տեր-Գրիգորյանցի օրինակին հետևեց բուժարանի ամբողջ անձնակազմը: Բուժարանում ձրի աշխատելու պատրաստակամություն հայտնեցին քաղաքում մասնավոր պրակտիկայով զբաղվող մի շարք բժիշկներ, որոնք, ցանկանալով փրկել բուժարանը, պատրաստ էին ձրի աշխատել, մինչև վարձով բժիշկներ գտնելը:

Սակայն քաղաքագլուխը իր առաջարկած ստորացուցիչ պայմաններով փաստորեն արգելակեց այն: Նա այդ բժիշկներից պահանջեց գրավոր պարտավորություն, որ կծառային մեկուկեսից երկու ամիս, մինչև արտասահմանից իր վերադառնալը և առաջարկեց 10 թուփի ընթացքում պատասխանել այդ պահանջին: Իսկ բուժականներից նա պահանջում էր հաստատել Ա. Տեր-Գրիգորյանցի մեղավոր լինելը, հակառակ դեպքում սպառնալով նրանց ղրկել քաղաքում ծառայելու իրավունքից:

Պարզ էր, որ քաղաքագլուխը բոլորովին էլ չէր մտածում, թե քաղաքը կզրկվի բուժարանից, նրան ավելի շուտ հետաքրքրում էր իր առաջիկա արտասահմանյան ճանապարհորդությունը:

Սակայն դեպքերի զարգացումն այլ ընթացք ստացավ: Քաղաքապետի կարգադրությամբ ոստիկանությունը փակեց բուժարանը, քաղաքը մնաց անառն քաղաքացիական բժշկական հիմնարկի: Քաղաքային վարչությունը բուժարանի փակման մեղքն ամբողջովին բարդեց Ա. Տեր-Գրիգորյանցի և իրենց ձրի ծառայությունն առաջարկած բժիշկների վրա: Քաղաքային վարչությունն իր իսկ ստեղծած միջադեպն օգտագործեց քաղաքի բոլոր բժիշկների դեմ զրբալարաշական լուրեր տարածելու համար, ժողովրդին ուղղված գրավոր դիմումի մեջ աղավաղելով բուժարանի փակման բուն պատճառները:

Դիմելով «Ռուսկի վրաչին» և շարադրելով վերոհիշյալ փաստերը, Ա. Տեր-Գրիգորյանցը այդ ամենը հանձնում էր հասարակական դատաստանին, որպեսզի հասարակայնությունն ինքը որոշի, թե ովքե՞ր են քաղաքային բուժարանի փակման մեղավորները:

Այդ նամակի տպագրությունից որոշ ժամանակ անց, նույն հանդեսում տպագրվեց ն. Տիգրանովի նամակը, որտեղ հեղինակը բերում էր Ալեքսանդրապոլի տեղական բժիշկների խորհրդակցության որոշումը՝ հիշյալ գործի կապակցությամբ: Այդ որոշման մեջ

նշվում էր, որ բաղաբային վարչությունն իրավունք ունի մերժելու Տիմոֆեևայի դիմումը արձակուրդ պնդու մասին, իսկ Ա. Տեր-Գրիգորյանցն իրավունք չունի հրաժարական տալու այդպիսի կտրուկ ձևով։ Ոչ ոք, իհարկե, չէր վիճում, որ բաղաբային վարչության իրավունքն էր մերժել արձակուրդը։ Բայց չէ՞ որ բաղաբային վարչությունը շարաշահում էր իր իրավունքը և իր անհոգի, ստորացուցի վերաբերմունքով արհամարհում էր բժշկական անձնակազմի շնորհակալ աշխատանքը։

Բժիշկների խորհրդակցությունն իր սրույման մեջ, միաժամանակ նշում էր, որ Ա. Տեր-Գրիգորյանցը բաղաբային վարչության դեմ իր գործողություններում առաջնորդվել է բուժարանի վիճակը բարոխքի անկեղծ ցանկությամբ, և որ ամբողջ կոնֆլիկտը պետք է բացատրել նրա կրքոտ խառնվածքով։ Որոշումն ընդունվել էր բաղաբի 14 բժիշկների կողմից։

Իհարկե, խառնվածքը իր դերը խաղացել է Ա. Տեր-Գրիգորյանցի գործողություններում, բայց ակնհայտ է այն հաշտվողականությունը, որ իր կնիքն է դրել Ալեքսանդրապոլի բժիշկների խորհրդակցության այդ որոշման վրա։

Այդ պետք է բացատրել ամենից առաջ նրանով, որ Ալեքսանդրապոլի բժիշկների մի մասն այդ շրջանում որոշ չափով մեկուսացած էր հասարակական կյանքից, ետև, գավառական բաղաբի բժիշկները հիմնականում մասնավոր պրակտիկայով զբաղվող մարդիկ էին, որոնք շատ հեռու էին բժշկական կենտրոններում ծավալված առաջավոր գաղափարներից։

Այս ամբողջ պատմությունը ցարական ադմինիստրացիայի կամայականությունների դեմ բուժարանի բժշկական անձնակազմի համառ պայքարի մի օրինակ է, որը, տարաբախտաբար, օժանդակություն չգտավ Ալեքսանդրապոլի մյուս բժիշկների կողմից։

Մի փոքր տարօրինակ է նաև «Ռուսկի վրաչի» վերաբերմունքը Հրատարակելով վերոհիշյալ երկու նամակները, նա ցույց չտվեց իր վերաբերմունքը, ամեն ինչ թողնելով ընթերցողների դատավճռին։

Կովկասցիների դարավոր շարիքի՝ մալարիայի դեմ մղվող պայքարին նվիրված հոդվածներ են տպագրվել «Ռուսկի վրաչում»։

1902 թվականին «Ռուսկի վրաչը» հաղորդում է, որ հաջորդ տարին Կովկաս կուղարկվի մալարիան ուսումնասիրող գիտական հանձնաժողով։ Այդ փաստի մասին համակրանքով է խոսում հանդեսը և միաժամանակ նշում է, թե ինչպիսի հսկայական զոհեր է տանում մալարիան Կովկասում։ 1903 թվականին նույն հանդեսի

խոսնիկայի բաժնում տեղեկություններ կան այդ հանձնաժողովի նպատակների և միջոցների մասին:

Կովկասում մալարիայի դեմ պայքարին է նվիրված Գ. Գաբրիելակու «Ճահճային տենդը Կովկասում» ճանապարհորդական նոթերի բնույթ կրող հոդվածը, որը հրապարակվել է «Ռուսկի վրաչ» հանդեսում: Գ. Գաբրիելակին գործուն մասնակցություն է ունեցել Ռուսաստանում ճահճային տենդն ուտամնասիրող Պիրոգովյան հանձնաժողովի աշխատանքներին և, մասնավորապես, այդ հանձնաժողովի կողմից Կովկաս ուղարկված էքսպեդիցիայի գործունեությանը, որի մեջ մտել են Ն. Ա. Սախարովը, Վ. Վ. Ֆավրը, Պ. Ի. Պաշուգինը, Տ. Գ. Խարազովը և Ա. Կ. Իվեսենը: Այդ էքսպեդիցիայի հետ միասին այցելելով Կովկաս, Գ. Գաբրիելակին նկարագրում է մալարիայի տարածվածության և նրա դեմ պայքարի վերաբերյալ իր տպավորություններն ու դիտողությունները:

Հեղինակը նկարագրում է մալարիայի գործած ավերածությունները Կովկասում, ինչպես նաև վերոհիշյալ հանձնաժողովի հակամալարիային գործունեության առանձին կողմերը: Եվլախում՝ Կովկասյան էքսպեդիցիայի գլխավոր կետում, ըստ Գ. Գաբրիելակու հաղորդած տեղեկությունների, իրագործվել են հակամալարիային պայքարի՝ իր ժամանակի ամենաառաջավոր միջոցները՝ ամբողջ բնակչության բժշկական հետազոտություն, պատուհանների մետաղական ցանցապատում, ձեռնոցների և ցանցադիմակների կիրառում, խինիինիդացիա և այլն:

Հակամալարիային պայքարի նշանավոր գործիչ, Գ. Գաբրիելակու այդ հոդվածն արժեքավոր է Կովկասում, և ընդհանրապես Ռուսաստանում, հակամալարիային պայքարի պատմության համար՝ որպես սկզբնաղբյուրներից մեկը:

1912 թվականին հաղորդագրություն կա այն մասին, որ մալարիայի Պիրոգովյան հանձնաժողովի, Զուռնարադի հակաժանտախտային կայանի, Կովկասի բժշկական ընկերությունների և լաբորատորիաների ներկայացուցիչներից Կովկասի փոխարքայությանը կից ստեղծվել է մալարիայի դեմ պայքարող հանձնաժողով և որ ժշակվել է այդ հանձնաժողովի ժամանակավոր կանոնադրությունը:

«Ռուսկի վրաչում» տպագրվել է Ս. Ս. Վիրսալաձեի հոդվածը «Թիֆլիսում տրոպիկական բժշկության Կովկասյան ինստիտուտ հիմնելու հարցի շուրջը» վերնագրով: Նշելով, թե ինչպիսի հսկայական ավերածություններ են գործում տրոպիկական հիվանդությունները Ռուսաստանի ծայրամասերում և մասնավորապես Կովկասում, որտեղ տարեկան 1 միլիոնից ավելի մարդ է հիվանդա-

նում մալարիայով, հեղինակը հրամայական պահանջ էր համարում Քիֆլիսում հիմնել տրոպիկական բժշկության կովկասյան ինստիտուտ։ Այդ ինստիտուտը, ըստ հեղինակի, պետք է օժանդակեր հայ-բնական գիտության տվյալ բնագավառի զարգացմանը, ղեկավարեր տրոպիկական հիվանդությունների դեմ պայքարը և այդ ուղղությամբ մասնագետ բժիշկների պատրաստման օջախ հանդիսանար։ Քննարկում էր այդ ինստիտուտում բակտերիոլոգիական պրոստոգոլոգիական, էնտոմոլոգիական, հեմատոլոգիական, կլինիկական, հիգիենիկ, ֆիզիական և պաթոլոգոանատոմիական բաժիններ ունենալու անհրաժեշտության հարցը։ Ս.Ս. Վիրսալաձեն իր հոգվածում հիշեցնում էր, որ 1913 թվականին Ռուս բնափորձարկուների XIII համագումարը որոշեց միջնորդել այդպիսի ինստիտուտ բացելու անհրաժեշտության մասին։ Սակայն թե՛ այդ համագումարի միջնորդությունը, թե՛ Ս. Վիրսալաձեի հոգվածը և թե՛ առաջավոր շատ մարդկանց միջամտությունն այդ հարցում անուշադրության մատնվեցին։

Միայն սովետական կարգերի հաղթանակից հետո, 1923 թվականին Կովկասում՝ նախ Երևանում, ապա նաև Քիֆլիսում ու Բաքվում, բացվեցին տրոպիկական ինստիտուտներ, որոնք հսկայական դեր խաղացին Անդրկովկասում տրոպիկական հիվանդությունների վերացման գործում։

«Ռուսկի վրաչի» էջերում իր պաշտպանությունն է գտել Կովկասում զեմատվոններ ստեղծելու անհրաժեշտության դադափարը։ Հանդեսի «խրոնիկա և մանր լուրեր» բաժնում, հոգվածներում և նամակներում, բաղմիցս արժարծովել է այդ հարցը։

Դեռևս 1903 թվականին «Ռուսկի վրաչը» իր խրոնիկայի բաժնում հաղորդում էր Կովկասյան բժշկական ընկերության որոշման մասին, որը Անդրկովկասում բժշկական օգնությունն ապահովող վավագույն կազմակերպությունը միայն ղեմստվոն էր համարում։

1914 թվականին, խոսելով Կովկասի հյուսիսում հղիության ու ծննդաբերության ժամանակ բուժօգնության բացակայության և դրա ծանր հետևանքների մասին, «Ռուսկի վրաչը» գրում է. «Ուրիշ ի՞նչ ապացույց է պետք Կովկասում զեմատվոններ ստեղծելու հրամայական անհրաժեշտության համար»։

Ս. Սուխանովը «Ռուսական հոգբերութական հիվանդանոցները կյանքից» վերնագրով հոգվածում, որ հրատարակել է 1914 թվականին «Ռուսկի վրաչի» ճամփաներ Ռուսաստանից և արտասահմանից» բաժնում, անդրադառնում է Կովկասում զեմատվոններ ստեղծելու անհրաժեշտության հարցին։ Հեղինակը նպատակ է դրել փաս-

տերով ցույց տալ, թե որքան մեծ է տարբերութիւնը հոգեկան հիւսնանքի օգնութեան ասպարեզում զեմատվոյական և ոչ-զեմատվոյական նահանգներում: Օգտվելով Կովկասում քաղաքացիական զերատեսչութեան մեջ ծառայող բժիշկների I համագումարի նյութերից, մասնավորապէս տվյալ համագումարում բժիշկներ Ի. Ն. Նղիազարովի, Գ. Ի. Օրբելու և Լ. Լ. Գոցրիճեի ղեկուցումներից և այդ նյութերի տվյալները համեմատելով զեմատվոյական նահանգների հետ, հեղինակը ցույց է տալիս, թե վերջիններս այդ ասպարեզում որքան առաջ են անցել Կովկասից:

Կովկասում բժշկական բարձրագույն կրթութեան օջախ ունենալու հարցին իր համակրական վերաբերմունքն է ցուցաբերել նաև «Ռուսկի վրաչ» հանդեսը: Այդ արտահայտվել է հետևյալ առիթով:

Ժողովրդական լուսավորութեան միոնիստրութիւնում 1905 թվականին հարց էր բարձրացվել Պետերբուրգի համալսարանում բժշկական ֆակուլտետ հիմնելու վերաբերյալ: Հաղորդելով այդ մասին, «Ռուսկի վրաչը» գրում էր, որ եթե հնարավորութիւն է ստեղծվում Ռուսաստանում բժշկական բարձրագույն կրթութեան նոր օջախ ստեղծելու, ապա այն պետք է բացել այնտեղ, որտեղ իսկապէս անհրաժեշտ է — Սարատովում, Թիֆլիսում, Մինսկում և այլուր:

Կովկասում բժշկական բարձրագույն կրթութեան օջախ ստեղծելու հարցը երկար ժամանակ շարունակում էր չլուծված և հուզող հարց մնալ:

1912 թվականին նորից մի այլ հաղորդագրութեան մեջ նշվում է, որ միոնիստրների խորհուրդը դարձյալ չլուծեց Կովկասում բարձրագույն օջախ ունենալու հարցը:

«Ռուսկի վրաչում» Կովկասի բժշկական-գիտական կյանքը լուսաբանող հոդվածներից մեկը հրապարակվել է 1912 թվականին: Այդ Թիֆլիսի Միխայլովյան քաղաքային հիվանդանոցի բժիշկների գիտական ժողովների գործունեութեան տարեկան հաշվետվութիւնն է, որի հեղինակն է Ս. Վիրսալաձեն:

Այդ հաշվետվութեան մեջ տեղեկութիւններ կան նաև հայազգի բժիշկների, օրինակ, Լ. Ա. Հովհաննիսյանի, Գ. Ա. Մելքոնյանի, Ռ. Բ. Փիրաբովի, Ա. Ի. Գրիգորյանցի, Ի. Ի. Նղիազարովի և ուրիշների կարգացած գիտական ղեկուցումների մասին:

Հիշատակված բժիշկներից Լ. Ա. Հովհաննիսյանը և Գ. Ա. Մելքոնյանը մեր օրերում նշանակալից գործ են կատարել Սովետական Հայաստանում՝ հանդիսանալով Նրեանի բժշկական ինստիտուտի պրոֆեսորներ, իսկ Լ. Ա. Հովհաննիսյանը՝ նաև ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս:

Բացի Կովկասյան բժշկական ընկերության գործունեությունից, «Ռուսկի վրաչը», լուսարանն է նաև Տուրերկույոզի դեմ պայքարի Կովկասյան ընկերության գործունեությունը: Հանդեսը մանրամասն հաղորդագրություն է տպագրել այդ ընկերության հիմնադիր ժողովի մասին: 1905 թ. ապրիլի 10-ին Թիֆլիսում կայացել է Տուրերկույոզի դեմ պայքարի Կովկասյան ընկերության առաջին ընդհանուր ժողովը: Ընկերության նպատակն էր հիմնել սանատորիաներ, ամբուլատորիաներ՝ տուրերկույոզով հիվանդների, հատկապես չքավորների համար, կազմակերպել տուրերկույոզի տարածումը կանխող միջոցառումներ՝ դասախոսություններ, բրոշյուրների հրատարակություն, ցուցահանդեսներ և այլն: Ընկերությունն իր առջև նպատակ էր դնում նաև տեղում կազմակերպել իր բաժանմունքները, ինչպես նաև հատուկ համագումարներ և այլ հակատուրերկույոզային միջոցառումներ:

Առաջին հիմնադիր ժողովում ընկերության ղեկավար կազմում բնտրվեցին մի շարք հայ բժիշկներ՝ Ն. Զ. Ումիկովը, Ի. Ի. Վարդանովը և ուրիշներ:

«Ռուսկի վրաչը» իր խրոնիկայի բաժնում անդրադարձել է նաև Կովկասյան բժիշկների համագումարներին: Հաղորդագրություններ են տպագրվել համագումարների հրավիրման, նրանց սեկցիաների ու բաժինների, ինչպես նաև նյութերի հրատարակությունների վերաբերյալ:

«Ռեցենդիա և բիրլիոգրաֆիա» բաժնում «Ռուսկի վրաչը» տպագրել է ռեցենզիաներ Կովկասում հրատարակված բժշկական գրքերի վերաբերյալ: Այսպես, 1916 թվականին ռեցենդիա է տպագրվել Կովկասում քաղաքացիական գերատեսչության ծառայող բժիշկների 1-ին համագումարի աշխատությունների Զ-րդ հատորի 1-ին մասի վերաբերյալ: Աշխատությունների այդ մասը նվիրված է Թիֆլիսի, Քութաիսի, Գանձակի նահանգների և Կարսի մարզի առանձին շրջանների նկարագրությանը:

Ռեցենդենտ Ռ. Ռոստովցևն այն միտքն է արտահայտում, որ Ռուսաստանը ոչինչ կամ համարյա ոչինչ չգիտե Կովկասի գյուղական բնակչության սանիտարական վիճակի մասին: Պոետների և ճանապարհորդների տված հիասքանչ բնութագրերը վերաբերում են Կովկասի բնությանը, այդ բնութագրերով են շատերը զաղափարված Կովկասի մասին: Այնինչ «Աշխատությունները» տալիս են Կովկասի իսկական պատկերը, նրա սանիտարական ծանր վիճակը:

Ռեցենդենտը համագումարի «Աշխատությունների» այդ հատո-

րի նյութերը արժեքավոր է համարում Կովկասի գյուղական բնակչության կենցաղային պայմանների, բժշկության նկատմամբ բնակչության ունեցած վերաբերմունքի, ժողովրդական բժշկության և այլ հարցերի տեսակետից:

XX դարի սկզբում Կովկասյան բժշկական ընկերությունն աշխույժ գործունեություն ծավալեց բժշկական գիտելիքների ժողովրդականացման ասպարեզում: 1902 թվականին հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն թարգմանվեցին և հրատարակվեցին Ն. Ի. Պիրոգովի հիշատակին նվիրված ուսմ բժիշկների ընկերության՝ առողջապահական մի շարք թերթիկները, տպագրվեցին բժիշկներ Ա. Բաբայանի, Մխիթարյանի, Քալանթարյանի, Մոնիսի և ուրիշների հանրամատչելի բրոշյուրները: Առողջապահական բնույթի այդ թերթիկներն ու բրոշյուրները լայնորեն տարածվում էին, ձրիաբար բաժանվում բնակչությանը:

Հաղորդելով այդ ամենի մասին, «Ռուսկի վրաչը» իր հիացմունքն էր հայտնում հետևյալ խոսքերով՝ «Փառք ու պատիվ Կովկասյան ընկերներին՝ բնակչության մեջ հիգիենիկ գիտելիքների պատվաստման ուղղությամբ նրանց ջերմհաղ աշխատանքի համար»¹:

Ամփոփենք: Վերն արդեն ասվեց, որ հայ-ռուսական բժշկական կապերի պատմության աղբյուրներից մեկը ուսմ բժշկական պարբերական մամուլն է, այդ թվում և «Ռուսկի վրաչը»: Այս հանդեսում տարիների ընթացքում հրատարակվել են նաև հայ բժիշկների գիտական աշխատությունները, ինչպես նաև տեղեկություններ այդ բժիշկների գիտական ու հասարակական գործունեության վերաբերյալ: Նույն հանդեսի էջերում արտացոլվել է նաև հայ բժիշկների պայքարը ռեակցիոն ուժերի դեմ:

Մի շարք դեպքերում «Ռուսկի վրաչը» հանդես է եկել Կովկասի բժիշկների, այդ թվում նաև հայ բժիշկների պաշտպանության դիրքերում ընդդեմ ցարական ադմինիստրացիայի կամայականությունների: «Ռուսկի վրաչի» մի շարք նյութեր լուսաբանում են հայ բժիշկների կյանքի ու գործունեության որոշ շուտամնասիրված հարցերը:

«Ռուսկի վրաչում» լուսաբանվել են նաև Կովկասի բժշկական կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են Կովկասում զեմստվոյական բժշկության, բժշկական

¹ «Русский врач», 1903, № 52, стр. 1859.

բարձրագույն կրթութեան օջախ ունենալու պահանջները, Կովկասի
բժշկագիտական կյանքի առանձին կողմերը և այլն:

«Միտակի վրաշը» պարունակում է հայ բժշկութեան պատմու-
թեան և հայ-ռուսական բժշկական կապերի պատմութեան համար
որոշակի արժէք ներկայացնող նյութեր, որոնք զգալի շահով լրաց-
նում են այդ պատմութեան առանձին հարցերի լուստրանութեանը:

А. А. ЛАЛЯН

МАТЕРИАЛЫ К ИСТОРИИ АРМЯНО-РУССКИХ СВЯЗЕЙ В ОБЛАСТИ МЕДИЦИНЫ

Резюме

Одним из источников изучения истории армяно-русских медицинских связей является русская периодическая печать, в том числе и журнал «Русский врач», который в течение всего периода своего издания на своих страницах печатал научные исследования армян-врачей и сведения о их научно-медицинской и общественной жизни. На страницах этого журнала была отражена борьба армян-врачей против реакционных сил.

В ряде случаев «Русский врач» выступал с позиции защиты кавказских, в том числе армян-врачей от произвола царской администрации. Некоторые материалы, помещенные в «Русском враче», освещают до сих пор неизвестные стороны жизни и деятельности армян-врачей.

В «Русском враче» нашли свой отклик и освещение такие важные вопросы в медицинской жизни Кавказа, как необходимость организации на Кавказе земской медицины, создания очага высшего медицинского образования, а также статьи, освещающие отдельные стороны медицинской жизни Кавказа.

«Русский врач» содержит материалы, представляющие определенный интерес для истории медицины в Армении и армяно-русских медицинских связей, которые значительно дополняют, освещая отдельные вопросы этой истории.